Ընդհանուր և արտաքին կապերի բաժին
No 4943 23 MAY 2019 ժամ 17:28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

Դեղի կարգավիճակ «23» մայիս 2019թ. No 1320 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ «ՊՐՈԳԵՍՏԵՐՈՆ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՍՏԱՆԴԱՐՏ 2Գ», «ՊՐՈԳԵՍՏԵՐՈՆ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՍՏԱՆԴԱՐՏ 0.4ՄԳ», «ՊՐՈԳԵՍՏԵՐՈՆ ԴԵԳՐԱԴԱԹԻՈՆ ԴԵՂԱՆՅՈՒԹ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՍՏԱՆԴԱՐՏ 3 ՍՐՎԱԿ» ԵՎ «ԿՐԻՆՈՆ ՊԼԱՑԵԲՈ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՍՏԱՆԴԱՐՏ 9 ՄԻԱՎՈՐ» ԴԵՂԱՆՅՈՒԹԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 202 որոշման N 1 հավելվածի 5-րդ կետը, Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի N 17332-19 փորձագիտական եզրակացությունը, որի համաձայն՝ ներմուծվող «Պրոգեստերոն լաբորատոր ստանդարտ 2գ», «Պրոգեստերոն լաբորատոր ստանդարտ 0.4մգ», «Պրոգեստերոն Դեգրադաթիոն դեղանյութ լաբորատոր ստանդարտ 3 սրվակ» և «Կրինոն Պլացեբո լաբորատոր ստանդարտ 9 միավոր» դեղանյութերի պիտանիության ժամկետը կարճ է մեկ տարուց և ղեկավարվելով «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8-րդ մասի 5-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 202-Ն որոշման N 1 հավելվածի 15-րդ կետի պահանջով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մերժել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից Մեծ Բրիտանիայից թիվ 025 առ 03/04/2019թ. հաշիվ-ապրանքագրով ներմուծվող «Պրոգեստերոն լաբորատոր ստանդարտ 2գ», «Պրոգեստերոն լաբորատոր ստանդարտ 0.4մգ», «Պրոգեստերոն Դեգրադաթիոն դեղանյութ լաբորատոր ստանդարտ 3 սրվակ» և

Հանձն. 23.05.19 ժ. 17:15

«Կրինոն Պլացեբո լաբորատոր ստանդարտ 9 միավոր» դեղանյութերի ներմուծումը Հայաստանի Հանրապետություն:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Զ. Դարբինյանին սույն հրամանը եռօրյա ժամկետում պատշաճ ձևով պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ ուղարկել վարչական վարույթի մասնակցին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

5/23/2019

X

VERIFIED OCSP 5/23/2019 15:27:12 GMT+4

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ